Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

245

ՊՊԱՀՈՍՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. Ց. Մ. ԵՎՄ.
ՏՊԱՐԱԿՆԵՐՆ ԲՆՋԻՋ

№ 1 ՊԱՏԿՈՄԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ ՊԱՏԿՈՄԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՊԵՏՀՐԱՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ

1924

ԵՐԵՎԱՆ
ԱՐԽԻՎ
ԳՐԱՊԱՀԱՍ

372-49-2

Ա 72
372

Հ. Ս. Խ. Հ. ՊԱՏԿՈՄԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԽԵՄԱ

1. Պատկոմական կազմակերպությունն իր աշխատանքի բազան է դարձնում մանկատները, մանկագաղութները և I ու II աստիճանների դպրոցները, կազմակերպելով 8—16 տարեկան պատանիներին, նրանց մեջ պատկոմական կոլեկտիվներ ստեղծելով նրանց ինքնավարություններով, դատական և կուլտկրթական մարմիններով։

Ծանոթ.— Պատկոմական կազմակերպությունը հատուկ ուշադրություն է դարձնում վերոհիշյալ հասակի պատանիների վրա, վորոնք վերև հիշած հիմնարկների մեջ չեն մտնում, և ստեղծում է նրանց մեջ նույնպես նման կոլեկտիվներ։

2. Պատկոմական կազմակերպությունը տանում է իր աշխատանքը թե քաղաքում և թե գյուղում։

ԿՈԼԼԵԿՏԻՎ

1. Կազմակերպվող ամբողջ պատանեկութիւնը միանում է կոլլեկտիվների ըստ կազմակերպվող հիմնարկութեան նշանների, դրպրոցը—դպրոցական կոլլեկտիվի, մանկատունը—մանկատնային կոլլեկտիվի և այլն։

Ծանոթ.—Պատկոմական այն կազմակերպութիւնները, որոնք չեն մտնում վերոհիշյալ հիմնարկների կոլլեկտիվների մեջ, միանում են ու կազմում ինքնուրույն կոլլեկտիվ, տեղական խորհրդին կից։

2. Տվյալ տեղի բոլոր կոլլեկտիվները միանում են ու կազմում տեղական կազմակերպութիւններ, տեղական կազմակերպութիւնները կազմում են գավառամասային, գավառամասայինները գավառային, գավառային կազմակերպութիւնները միանալով տալիս են ընդհանուր հանրապետական կազմակերպութիւն։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

1. Տվյալ կոլլեկտիվի բարձրագույն մարմինն է հանդիսանում պատկոմական ընդ-

հանուր ժողովը, վորը գումարվում է վոչ ուքան մի անգամ և լսում է գործկոմի զեկուցումը։

2. Ընդհանուր ժողովը պատգամավորներ է ընտրում տեղական պատգամավորական ժողովի համար 20-ից 1 հաշվով։

3. Ընդհանուր ժողովի կողմից ընտրված բոլոր մարմինները վերընտրվում են յուրաքանչյուր յերկու ամիսը մեկ անգամ։

4. Ընդհանուր ժողովին յետ կանչելու իրավունք է տրվում, յերբ ընտրված անձնավորություններն անհամապատասխան են գտնվում։

5. Ընդհանուր ժողովը վավեր է համարվում, յերբ ներկա յեն կոլլեկտիվի անդամների կեսից ավելին, հակառակ դեպքում հետաձգվում է և յերկրորդ անգամ արդեն նա վավեր է համարվում անկախ ներկա յեղողների թվից։

Գ Ո Ր Ծ Կ Ո Մ

1. Կառավարվում են պատկոմական կոլլեկտիվները ավյալ կոլլեկտիվի գործադիր կոմիտեյով, վորն ընտրվում է պատկոմների

միջից կոլեկտիվի ընդհանուր ժողովում։

Մանոր. 1.—Գործկոմի նախագահը, որը միաժամանակ տվյալ կոլեկտիվի հրահանգիչն է, նշանակվում է տեղական խորհրդի կողմից։

Մանոր. 2.—Գործկոմի կազմը

ա) Հրահանգիչ	նախագահ.
բ) պատկոմ	ֆիզ. դաստ. վար.
գ) »	կուլտ-կրթ. վար.
դ) »	քարտուղար.
ե) »	ազատ անդամ։

2. Կոլեկտիվի գործկոմը հետևում է կոլեկտիվի աշխատանքներին, ղեկավարում է և կանոնավորում համաձայն տեղական խորհրդից ստացված հրահանգների։

3. Գործկոմը գումարվում է վոչ ուշ քան շաբաթը մի անգամ, յերբ վճռվում են դանազան տեխնիկական հարցեր, վորոնք վերաբերում են տվյալ կոլեկտիվի աշխատանքներին։

4. Գործկոմը պատասխանատու յե իր կոլեկտիվի ընդհանուր ժողովի և տեղական խորհրդի առաջ։

5. Տվյալ վայրի բոլոր կոլեկտիվները կա-

ռավարվում են տեղական խորհրդի միջոցով, վորը բաղկացած է տեղական կոլլեկտիվնե-րի բոլոր հրահանգիչներից։

6. Կոլլեկտիվի գործկոմն ընտրվում է յե-րեք ամիս ժամանակով։

7. Տեղական բոլոր կոլլեկտիվները միա-նում են ու կազմում գավառային կոլլեկ-տիվներ ու կառավարվում են գավառամասա-յին խորհրդով, վորը նշանակվում է գավա-ռային խորհրդի կողմից։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Միջկոլլեկտիվյան հարցեր լուծելու համար գումարվում են տեղական պատգա-մավորական ժողովներ, վորոնք ընտրվում են ընդհանուր ժողովներում հաշվով 20-ից 1 պատգամավոր։

Ծանոթ.—Պատգամավորական ժողովները գումարվում են միայն այն պայման-ներում, յերբ տվյալ վայրի կոլլեկտիվ-ների թիվը յերկուսից ավելի յե, հա-կառակ դեպքում պատկոմների ընդհա-նուր ժողով է միայն գումարվում։

2. Պատգամավորական ժողովների վորո-

շումները վավերացվում են տեղական խորհրդի կողմից և միայն այդ դեպքում են նրանք ուժի մեջ մտնում։

3. Գավառային մասշտաբով գավառային պատգամավորական ժողովներ են գումարվում։ Գավառային պատգամավորական ժողովների պատգամավորներն ընտրվում են կոլլեկտիվներից 50-ից 1 հաշվով։

Ծանոթ.—Հիսունից պակաս անդամ ունեցող կոլլեկտիվները նույնպես տալիս են մեկ պատգամավոր։

ԳԱՎԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ

1. Գավառային խորհուրդների ընտրության և ընդհանրապես հարցերը գավառային մասշտաբով լուծելու համար գումարվում է գավառային համագումար 100-ից 1 սկզբունքով։

2. Գավառային համագումարներ գումարվում են վեց ամիսը մի անգամ, քննում և գծում են հետագա աշխատանքների ծրագիրը։

3. Գավառային համագումարները համահայկական համագումարներին պատգամավորներ են ուղարկում 250-ից 1 սկզբունքով։

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

1. Հ. Ս. Խ. Հ. պատկոմական կազմակերպությունների գերագույն որենսդիր մարմինն է հանդիսանում պատկոմական ներկայացուցիչների համագումարը, որը ժողովվում է տարին մի անգամ։

2. Համագումարին իրավունք է վերապահվում փոփոխելու սույն կանոնադրությունը։

3. Համագումարն իրենից ընտրում է կենտրոնական խորհուրդ և վերատուգիչ հանձնաժողով՝ բաղկացած յերեք անձից։

Գծում է հետագա աշխատանքի ծրագիրը։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1. Յեթե տվյալ վայրում մի կոլլեկտիվից ավելի յե, տեղական խորհուրդ է սահմանվում կոլլեկտիվներին ամրացած հրահանգիչներից։

ԳԱՎԱՌԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

1. Յեթե տվյալ գավառակում մի տեղական կազմակերպությունից ավելի յե, գավառակային խորհուրդ է սահմանվում, որը նշանակվում է գավառային խորհրդի կողմից։

ԳԱՎԱՌԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1. Գավառային համագումարն իրենից գավառային խորհուրդ է ընտրում, վորը ներկայանում է վորպես գերագույն գործադիր մարմին մի համագումարից մինչև մյուսը։

2. Գավառային խորհուրդը յենթարկվում և պատասխանատու յե կենտրոնական խորհրդի առաջ։

3. Գավառային խորհուրդն ընտրվում է վոչ ավելի քան 7 անձից։

4. Գավառային խորհուրդն ունի հետևյալ հիմնական բաժինները.

ա) կազմակերպչ.-հրահանգչական.

բ) կուլտ-լուսավորչական.

գ) ֆինանս.-կրթության.

դ) ընդհանուր։

Ծանոթ.—Հիմնական բաժինները բաժանվում են խորհրդի անդամների մեջ։

5. Գավառային խորհուրդը միևնույն ժամանակ տեղական քաղաքային խորհուրդն է հանդիսանում։

6. Գավառային խորհրդի կազմը յուրաքանչյուր անդամ պիտի հաստատվի կենտրոնական խորհրդի կողմից։

7. Գավառային խորհրդի անդամ ընտրվելու իրավունք ունեն այն պատգամները, որոնք մեկ տարվա պատգամական կամ կոմսերիտմիության անդամի ստաժ ունեն։

Մաւնոր.—Հակառակ դեպքում յուրաքանչյուր առանձին դեպքի համար հարկավոր է խնդրել կենտրոնական խորհրդի թույլտվությունը։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1. Կենտրոնական խորհուրդն ընտրվում է պատգամական ներկայացուցիչների համահայկական համագումարում և գերագույն ղեկավարող ու գործադիր որգանն է հանդիսանում մի համագումարից մինչև մյուսը

2. Կենտրոնական խորհրդի անդամ կարող են ընտրվել այն անհատները, որոնք ունեն կազմակերպչական փորձառություն և մանկավարժական պատրաստականություն և առնվազն մի տարվա պատգամական կամ կոմսերիտմիության ստաժ։

3. Կենտրոնական խորհուրդն ունի հետևյալ հիմնական բաժինները.

ա) կազմակերպչ.-հրահանգչական.

բ) կուլտ-լուսավորական.

գ) ֆիզիկ. կրթության.

դ) ընդհանուր։

4. Ցանկալի է, որ գավառային կազմակերպությունների բոլոր ղեկավարները (գավառական խորհուրդների պետերը) կենտրոնական խորհրդի անդամներ լինեն։

5. Կենտրոնական խորհուրդն ունի բյուրո, որը գտնվում և կենտրոնում և ղեկավարում է աշխատանքները։

6. Համագումարը որոշում է կենտրոնական խորհրդի անդամների թիվը։

Մանոթ.—Հիմնական բաժինները բաժանվում են բյուրոյի անդամների մեջ։

7. Կենտրոնական խորհրդի բյուրոն յուրաքանչյուր ամիսը մի անգամ ժողովում է կենտրոնական խորհրդի պլենումը, որտեղ քննվում են հետագա աշխատանքի հարցերը։

8. Կենտրոնական խորհրդի բյուրոն մշակում է ծրագրներ և աշխատանքի հրահանգներ ֆիզիկական կրթության, կազմ.-հրահանգչական և կուլտ-լուսավորական հարցերի վերաբերյալ և ուղարկում է տեղերը

9. Կենտրոնական խորհուրդը ղեկավարում է ու վերահսկում գավառային խորհրդի աշխատանքներին ամրացրած ընկերների միջոցով և նրանց հրահանգիչների տեղերն ուղարկելով։

10. Կենտրոնական խորհուրդն իրավունք ունի աշխատավորներին մի տեղից մյուս տեղն ուղարկելու ըստ իր հայեցողության և փոփոխելու գավառային խորհրդի կազմը։

11. Կենտրոնական խորհուրդն իրավունք ունի և իր վեռոն դնելու նրա վորոշումների վրա։

12. Կենտրոնական խորհուրդն իրավունք ունի ժամանակավորապես կամ ընդմիշտ ցրելու այս կամ այն կազմակերպությունը։

ՊԱՏԿՈՄԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

1. Բոլոր կոլեկտիվներին կից կազմակերպվում է ընկերական դատարան, վորն ընտրվում է տվյալ կոլեկտիվի ընդհանուր ժողովում։

2. Դատավորներն ընտրվում են յերեք ամիս ժամանակով և բաղկացած են 3-ից մինչև 5 հոգուց։

3. Գավառական խորհրդին կից կազմա-

կերպվում է մշտական ընկերական դատարան, որն ընտրվում է գավառային համագումարում և կազմվում է հետևյալ սկզբունքով՝ 3 մարդ համագումարից, մի մարդ խորհրդից, մեկն այն կոլեկտիվից, որը դատվում է։

4. Ընկերական դատարանի բոլոր որոշումները պարտադիր են կոլեկտիվի անդամների համար, այդ որոշումը հրահանգչի կողմից հաստատվելուց հետո։

5. Յեթե մեղադրյալը գոհ չէ ընկերական դատարանի որոշումով, գործը հանձնում է գավառային դատարանը։

Ծանոթ.—Գավառային դատարանի վճիռը վավերացվում է գավառային խորհրդի կողմից և նրա որոշումը վերջնական և համարվում։

6. Դատարանի նիստերը կարող են լինել դատարանի հայեցողությամբ դռնբաց ու դռնփակ։

ԿԱՆՈՆԱԳԻՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Պատկոմական խորհրդի պարտականությունն է բոլոր բարձրագույն ղեկավարող կամ գործադիր մարմիններից ստացվող հրահանգները ու հրամանները ի կատար ածել տեղական մասշտաբով իրենց մարմինների կողմից նշանակված ամենակարճ ժամանակում, չփոփոխելով նրանց և վոչ մի կետը։

Ծանոթ. Հրահանգի կամ հրամանի այս կամ այն կետը փոփոխել, տեղական պայմաններին հարմարեցնելու համար կարելի է միայն նույն այդ ղեկավարող կամ գործադիր մարմինների թույլտվությամբ։

2. Աշխատանքն ընդարձակել և խորացնել բարձրագույն մարմիններից մատնանշված շրջանակներում, ցույց տալով տեղական նախաձեռնության մաքսիմումը։

3. Գավառամասային խորհուրդները բացի տեղական խորհուրդների հատուկ աշխատանքից, տեղերը հրահանգներ և հրահանգիչներ ուղարկելուց, կարիք յեղած դեպքում գումարում են պատգամավորական ժողով-

ներ և յերկու շաբաթը մի անգամ մանրամասն զեկույց և տեղեկություն են ուղարկում գավառային խորհուրդը գավառամասի աշխատանքի մասին։

4. Գավառամասային խորհուրդներն իրավունք ունեն կանգնեցնելու տեղական խորհուրդների վճիռները, հաղորդելով դրա մասին գավառային խորհուրդ և միայն այնտեղից պատասխան ստանալուց հետո վճռական միջոցներ ձեռք առնում։

5. Պատկոմական նոր կոլեկտիվներ ու տեղեր ցրել կամ կազմակերպել—կարելի յե միայն գավառային խորհրդի թույլտվությամբ։

ԳԱՎԱՌԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Բացի տեղական և գավառամասային խորհուրդների համար վորոշված աշխատանքից իդեալես և կազմակերպչորեն ղեկավարում է գավառի բոլոր կազմակերպությունները, մշակում է կենտրոնական խորհրդից ստացած հրահանգներն ու հրամանները, ուղարկում է այդ գավառամասային խորհուրդներին, պահանջելով խստորեն նրանց կատարումը, ամեն ամիս մանրամասն զեկուցումներ

ու տեղեկություններ է ուղարկում խորհրդի գործունեության և գավառի աշխատանքի մասին կենտրոնական խորհրդին։

Ցրել այս կամ այն կազմակերպությունը գավառային խորհուրդը չի կարող, նախապես չխնդրելով կենտրոնական խորհրդի թույլտվությունը։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գերագույն ղեկավարող մարմին և հանդիսանում հանրապետական մասշտաբով ընդհանրապես կենտրոնական խորհուրդը, ղեկավարում է և վերահսկում աշխատանքները գավառներում այնտեղ նշանակված ընկերների միջոցով հրահանգներ և հրամաններ ուղարկելով, մշակում է աշխատանքի ծրագիրն ու մեթոդները, կազմակերպում է գավառային համագումարներ, բացում է թե կենտրոնական և թե գավառներում հրահանգիչների դասընթացքներ, հրադանգիչների կազմ պատրաստելու համար։ Դասընթացքների համար մշակում է մանրամասն ծրագիր Լուսժողկոմի և Հ.Կ. Յե. Մ. հետ միասին, որոնց ոգնությամբ բացում է ու վարում դասընթացքները։

Հրահանգչական դասընթացքների բոլոր շրջանավարտները մտնում են կենտրոնա-

կան խորհրդի և տեղական կենտրոնների տրամադրության տակ, վորտեղից նրանք նշանակվում են նույն կենտրոնների հայեցողությամբ։ Խոշոր գավառամասային և գավառային խորհուրդներին կից կազմակերպվում է հրահանգչական խմբակ, վորը շաբաթը յերեք անգամ պարապմունքներ է ունենում, վորտեղ կարդացվում են դասախոսություններ և զեկուցումներ զանազան հարցերի վերաբերմամբ, հրահանգիչների վորակավորումը բարձրացնելու նպատակով։

Բացի պարապմունքից, շաբաթը յերկու անգամ տեղի յեն ունենում ժողովներ, վորտեղ զեկուցումներ են արվում տեղերից, քննվում են մեթոդիկական հարցեր, քննադատվում են կոլլեկտիվների աշխատանքները, խորհրդի հետ միասին քննվում են խորհրդի կողմից բարձրացված հարցերը և գծվում է հետագա աշխատանքի ծրագիրը։

ՀՐԱՀԱՆԳԻՉ

Տվյալ կոլլեկտիվի աշխատանքը հրահանգիչը զեկավարում է համաձայն տեղական խորհրդից ստացված հրահանգների և ցուցմունքների։

Ծանոթ. 1.—Դպրոցներում հրահանգիչը, բացի պատկոմական կազմակերպության անդամների մեջ ֆիզ. դաստիարակության և կուլտ-լուսավորական աշխատանքներից, կատարում են նույնպես տվյալ դպրոցի ամբողջ աշակերտության դաստիարակության գործը՝ վարի համար նրան հատկացվում են շաբաթական յերկու ժամ յուրաքանչյուր դասարանում։

Ծանոթ. 2.—Հրահանգիչը տեղ ունի դպրոցական խորհրդում ուսուցիչների հետ հավասար իրավունքներով։

Հրահանգիչն իրավունք ունի իրան հանձնարարված կոլեկտիվի վորոշումը կանգնեցնելու, այդ մասին վերջնական վճիռ ստանալու համար խորհրդին հաղորդելով։

Հրահանգիչ կարող են լինել 16 տարեկանից վոչ պակաս պատանիները և 15-ից վոչ պակաս աղջիկները։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

1. Կազմակերպության մեջ ընդունվելու համար դիմում և գրվում այն կոլեկտիվի

Ա. Ս. Ս. Ս. Ա. Ս. Ա. Ս. Ա

գործկոմին, վորտեղ ընդունվել են ուզում։

Գործկոմը հարցը դնում է ընդհանուր ժողովում և, յեթե ընդունվում է, անհրաժեշտ է տեղական խորհրդի հաստատությունը։

Ծանոթ.—Տեղական խորհուրդն իր հերթին զեկուցումների մեջ հաղորդում է գավառային խորհրդին վերջնական հաստատման համար։

2. Պատկոմները հեռացվում են նույն կարգով կանոնադրությունն ու կարգը խախտելու դեպքում և պատկոմին անվայել վարքի համար։

ՊԱՏԿՈՄՆԵՐԻ ՈՐԵՆՔՆԵՐԸ

1. Պատկոմն աշխատավորի հարազատ զավակն է և հավատարիմը։

2. Պատկոմն աղնիվ է ու ճշմարտասեր։

3. Պատկոմը բոլոր այլ պատկոմների ու կոմյերիտների յեղբայրն է։

4. Պատկոմը քաղաքավարի յե։

5. Պատկոմն առանց հակաճառելու յենթարկվում է կարգապահության պահանջներին։

6. Պատկոմը յերբեք չի ծխում։

7. Պատկոմը ջանասեր է ու համառ. իր սկսած գործը նա տանում է մինչև վերջ։

8. Պատկոմը հոգով չի ընկճվում։

9. Պատկոմը չի հայհոյում։

10. Պատկոմը հավատարիմ է իր կազմակերպությանը և պահանջները համարում է անխախտ պարտականություն։

11. Պատկոմն ամբողջ ուժերով ոգնում է կոմմունիստական շինարարությանը։

Պատկոմներ, աշխատանքով դեպի ազատություն կտանեք ամբողջ աշխարհը և ժըպիտը դեմքերիդ դուք պատրաստ կլինեք ձեր պարտքը կատարելու։

ՊԱՏԿՈՄՆԵՐԻ ԴՐՈՇԱԿԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարմիր դրոշակն ազատության նշան է, վորը ձեռք է բերվում արյունով. հնգաթայը աստղն աշխարհի հինգ մասերն են՝ մի տեղ միացած, մուրճ ու մանգաղը՝ աշխատանքի նշաններն են։

ՎՈՂՋՈՒՅՑԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հինգ մատներս միասին աշխարհի հինգ մասերն են, յեղբայրաբար միացած. բարձրացնելով մեր ձեռքը դեպի մեր գլուխը, մենք ասում ենք, վոր դա մեր նպատակն է, վորին հասնել ենք ձգտում մեր ձեռքի ու խելքի ուժով (ձեռքն աշխատանքի նշանաբանն է)։


Հ. Ս. Հ.
ՍԱՐԳԻՍ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԳՐԱԶՈՒՍ

ՀՀ Ազգային գրադարան
NL0835945

Uh 245 - Q92
372